# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի արդյունքում 2014թ. դեկտեմբերի 27-ին կնքված № ՇՀԱՊՁԲ-9/1-9 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր), ինչպես նաև Պայմանագրի կից 18.03.2015թ. կքված N 1 համաձայնագրում (այսուհետև՝ Համաձայնագիր) 2015թ. նոյեմբերի 10-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

***Փոփոխության պատճառ:*** Պատվիրատուի մոտ առաջացել է Պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված *«Ավտոմատ սարքի երևակիչ /20լիտրի համար/ և ամրացուցիչ/ 25լ լիտրի համար/ «AGFA» ֆիրմայի»* ապրանքատեսակի քանակների ավելացման անհրաժեշտություն:

***Փոփոխության նկարագրություն:*** Կողմերը, հիմք ընդունելով ապրանքի լրացուցիչ քանակի ձեռքբերման անհրաժեշտության և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, որոշեցին ավելացնել «Ավտոմատ սարքի երևակիչ /20լիտրի համար/ և ամրացուցիչ/ 25լ լիտրի համար/ «AGFA» ֆիրմայի» ապրանքատեսակի քանակը՝ համաձայն կնքված Փոփոխությանը կից Հավելվածներ N 1-ի և 2-ի: Ավելացվող ապրանքի ընդհանուր գինը կազմում է 600,000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, որը չի գերազանցում Պայմանագրի(Համաձայնագրի) գնի քսան տոկոսը: Սույն Փոփոխության արդյունքում Պայմանագրի ընդհանուր գումարը կկազմի 11,927,000 (տասնմեկ միլիոն ինը հարյուր քսանյոթ հազար) ՀՀ դրամ: Վճարումը կիրականացվի Համաձայնագրի 2.2 կետին և սույն Փոփոխության Հավելված 2-ին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 25.12.2015թ.:

***Փոփոխության հիմնավորում:*** Փոփոխությունը կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 9.2, ինչպես նաև Համաձայնագրի 3.4 կետերը և այն չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 60-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրով նախատեսված ապրանքի ավելացվող ծավալները չեն գերազանցում պայմանագրի գնի 20 տոկոսը: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ: Միաժամանակ տեղեկացվում է, որ վերոնշյալ փոփոխությունով նախատեսված ապրանքների լրացուցիչ քանակների ձեռքբերման համար ֆինանսական միջոցները ընդգրկված են ՀՀ 2015թ-ի պետական բյուջեյով նախատեսված հատկացումների ներքին հոդվածային վերաբաշխման 27.10.2015թ. N 01/83-1/32443-15 ծանուցագրի մեջ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

**Հեռախոս՝ 010-66-24-94:**

**Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:**

**Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:**

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 1**
**ՇՀԱՊՁԲ-9/1-9 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **10-ը նոյեմբերի 2015թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Մեդիտեք» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 27.12.2014թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-9/1-9 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.2 կետը, ինչպես նաև Պայմանագրի կից 18.03.2015թ. կքված N 1 համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) 3.4 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին:

**1. Փոփոխության առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով ապրանքի լրացուցիչ քանակի ձեռքբերման անհրաժեշտության և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, որոշեցին ավելացնել «*Ավտոմատ սարքի երևակիչ /20լիտրի համար/ և ամրացուցիչ/ 25լ լիտրի համար/ «AGFA» ֆիրմայի*» ապրանքատեսակի քանակը՝ համաձայն սույն Փոփոխությանը կից Հավելվածներ N 1-ի և 2-ի:

1.2 Ավելացվող ապրանքի ընդհանուր գինը կազմում է ***600,000 (վեց հարյուր հազար)*** ՀՀ դրամ, որը չի գերազանցում Պայմանագրի(Համաձայնագրի) գնի քսան տոկոսը: Սույն Փոփոխության արդյունքում Պայմանագրի ընդհանուր գումարը կկազմի ***11,927,000 (տասնմեկ միլիոն ինը հարյուր քսանյոթ հազար)*** ՀՀ դրամ:

1.3 Վճարումը կիրականացվի Համաձայնագրի 2.2 կետին և սույն Փոփոխության Հավելված 2-ին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 25.12.2015թ.:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով(Համաձայնագրով) նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի(Համաձայնագրի) անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Փոփոխության №№ 1 և 2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Մեդիտեք» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | Ք. Երևան, Ծ. Իսակովի 22/3 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայբիզնեսբանկ» ՓԲՄ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 11500467607[illegible] |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 0122207[illegible] |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ |

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ(ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ) ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝
ՍՈՒՅՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Մեկ միավ. գին/դրամ/ | Ընդհանուր գումար/դրամ/ | 2015թ. 2-րդ եռամսյակ | 2015թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ քան 20.12.2015թ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Շպատել փայտյա | հատ | 50000 | 4 | 200000 | 25000 | 25000 |
| 2 | Ավտոմատ սարքի երևակիչ /20լիտրի համար/ և ամրացուցիչ/ 25լ լիտրի համար/ «AGFA» ֆիրմայի | հավաքածու | ***55*** | 30000 | 1650000 | 20 | ***35*** |
| 3 | «AGFA» ֆիրմայի չոր երևակման Drystar ժապավեններ 35X43 N100 | տուփ | 10 | 140000 | 1400000 | 5 | 5 |
| 4 | Ռենտգեն ժապավեն 30 x40 N100 | տուփ | 200 | 31800 | 6360000 | 100 | 100 |
| 5 | Ռենտգեն ժապավեն 24 x30 MXG N100 «AGFA» | տուփ | 50 | 20800 | 1040000 | 25 | 25 |
| 6 | Ռենտգեն ժապավեն 18 x24 MXG N100 «AGFA» | տուփ | 80 | 11650 | 932000 | 40 | 40 |
| 7 | Քիմ. ռեակտիվների կ-տ | հատ | 30 | 11500 | 345000 | 15 | 15 |
| | Ընդամենը | | | | 11,927,000 | | |

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ(ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ) ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝
ՍՈՒՅՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ*

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին/դրամ/ | Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ., ընդ որում՝ /դրամ/ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ |
| 1 | Շպատել փայտյա | 33161220/1/4/2 | 200000 | 0 | 100000 | 100000 | 200000 |
| 2 | Ավտոմատ սարքի երևակիչ /20լիտրի համար/ և ամրացուցիչ/ 25լ լիտրի համար/ «AGFA» ֆիրմայի | 24931500/1/4/4 | 1650000 | 0 | 600000 | 600000 | 1650000 |
| 3 | «AGFA» ֆիրմայի չոր երևակման Drystar ժապավեններ 35X43 N100 | 32351230/1/4/5 | 1400000 | 0 | 700000 | 700000 | 1400000 |
| 4 | Ռենտգեն ժապավեն 30 x40 N100 | 32351230/3/4/5 | 6360000 | 0 | 3180000 | 3180000 | 6360000 |
| 5 | Ռենտգեն ժապավեն 24 x30 MXG N100 «AGFA» | 32351230/4/4/5 | 1040000 | 0 | 520000 | 520000 | 1040000 |
| 6 | Ռենտգեն ժապավեն 18 x24 MXG N100 «AGFA» | 32351230/5/4/5 | 932000 | 0 | 466000 | 466000 | 932000 |
| 7 | Քիմ. ռեակտիվների կ-տ | 38431700/1/4/4 | 345000 | 0 | 172500 | 172500 | 345000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝
ՆՏԱ դեպարտամենտի պետ՝

**Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ**

տնօրեն

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մեդիսեր»

**Ա. ԱՌԱՔԱՏՐՅԱՆ**